



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՄԱՅԱԶԴ

### ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՎԻԳԷՆ ՇԱՂՂՈՅԵԱՆԻ



Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձրաշնորհ Տեր Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը խոր ցաւով կը գուժեն Ազգային Բարերար Վիգէն Շաղղոյեանի մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 18 Փետրուար, 2011-ին:

Հանգուցեալ Վիգէն Շաղղոյեան, Հայ ժողովուրդի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վաստակաւոր ու հաւատարիմ նուիրեալներէն եղած է եւ արժանացած՝ Կիլիկեան Իշխանի Շքանշանին:

Ան իր ծառայութեամբ, նիւթական եւ բարոյական վաստակէն բաժին հանած է Ս. Աթոռոյս, Զուէթի Ծոցի երկիրներուն թեմին եւ յատկապէս Զուէյթի Ազգ. Վարժարանին, Հայ Դատին ու հայ Մշակութային Հիմնարկութեան աշխատակներուն եւ ծրագիրներուն:

Առաջնորդ Սրբազան Հօր, Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան որոշումով, պիտի կատարուի Ազգային Թաղում: Յուդարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ, Շաբաթ 26 Փետրուար, 2011-ին Կ.Ե. ժամը 2:00-ին, Կլէմտէի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, ապա թաղումը՝ Hollywood Hills Forest Lawn Գերեզմանատան մէջ:

Այս տխուր առիթով, Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութիւնը ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի այրիին՝ Տիկին Գոհարին, զաւակներուն ու հարազատներուն, աղօթելով, որ Աստուած անոր յիշատակը պահէ անթառամ ու նուիրաբերումը ընէ օրինակելի:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

**IN MEMORIAM  
VICKEN SHAGHZOIAN**

It is with deep sorrow that H.E. Archbishop Moushegh Mardirossian, prelate, and the Religious and Executive Council learned of the passing of national benefactor Mr. Vicken Shaghzoian, which occurred on Friday, February 18<sup>th</sup>, 2011.

Mr. Shaghzoian was for decades a faithful and devoted son of the Holy See of Cilicia and a recipient of the Prince of Cilicia medal.

His service and philanthropy encompassed the Catholicosate of Cilicia, various national organizations and establishments, the Diocese of Kuwait and the Gulf and especially the Armenian School of Kuwait, the Armenian National Committee and the Armenian Cultural Foundation.

A national funeral will be held on Saturday, February 26<sup>th</sup>, at 2:00 p.m., at St. Mary's Armenian Apostolic Church in Glendale, followed by the burial at Forest Lawn Hollywood Hills.

The Prelate and Councils' members extend their condolences and prayers to his wife Kohar, their children, and family members.

May his memory remain ever blessed.

\*\*\*

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐԹ ՅՈՒԿՎՈՒՏԻ ԵԿԵՂԵՑՈՅ  
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԻՆ ԱՌԻԹՈՎ**

Կիրակի, 27 Փետրուարին, Նորթ Յուիվուտի Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հիմնադրութեան երկրորդ տարեդարձին առիթով, եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Նորթ Յուիվուտի Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, կ.ե. ժամը 2-ին:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ, ուրարի տուչութիւն պիտի կատարէ եւ օրուան պատգամը պիտի փոխանցէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Ս. Խորանին պիտի սպասարկէ Եկեղեցւոյ հոգեւոր մատակարար՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Եկեղեցւոյ հասցէն է՝ 13050 Vanowen Street, North Hollywood:

Նորթ Յուիվուտի Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հիմնադրութեան երկրորդ տարեդարձի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 18 Փետրուարի երեկոյեան, Նորթ Յուիվուտի «Անուշ Օճախ» ճաշարանին մէջ:

Ձեռնարկը կը վայելէր Առաջնորդ Սրբազան Յօր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը, եւ կազմակերպուած էր Եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ:

Բարի գալուստի խօսք արտասանեց եւ ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց հոգաբարձութեան ատենապետ Տիար Խաչիկ Թիթիզեան:

Սրտի խօսք արտասանեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան:

Իրագործուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:  
Երեկոյեան գեղարուեստական բաժինը իր աւարտին հասաւ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան խօսքով եւ «Պահպանիչ»ով:

## **EPISCOPAL DIVINE LITURGY ON THE SECOND ANNIVERSARY OF THE NORTH HOLLYWOOD PARISH**

On Sunday, February 27<sup>th</sup>, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the Armenian Apostolic Church of North Hollywood on the second anniversary of the parish.

Parish Pastor Very Rev. Fr. Muron Aznikian will assist at the altar. The service begins at 2:00 p.m. The church is located at 13050 Vanowen Street in North Hollywood.

The second anniversary banquet was held on Friday, February 18<sup>th</sup> under the auspices of and with the presence of the Prelate. The banquet took place at Anoush Ojakh Hall in North Hollywood and was organized by the Parish Board of Trustees.

Welcoming remarks were delivered by Board of Trustees Chair Mr. Khatchig Titizian. Remarks were also delivered by Very Rev. Fr. Muron Aznikian. A cultural program also took place.

The official program came to a close with the Prelate's message and blessings.

\*\*\*

## **ՀՕՄ-Ի ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՅԱԼԳԻՍ ՄԵՐ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ**

Արեւմտեան մեր Թեմին մէջ, տարիներու աւանդութիւն է խունկ ու աղօթքով յիշատակել Հայ Օգնութեան Միութեան ննջեցեալները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի տնօրինումով, եւ ընդառաջելով ՀՕՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան խնդրանքին, Կիրակի, 27 Փետրուարին, Արեւմտեան մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի ՀՕՄԻ ննջեցեալ ծառայողներու հոգիներուն համար:

Կոչ կ'ուղղենք մեր հաւատացեալ ժողովուրդին, որ աղօթքով միանայ նուիրեալ հայուհիներու յիշատակի այս արարողութեան:

## **REQUIEM SERVICE FOR A.R.S. MEMBERS TO BE OFFERED IN PRELACY CHURCHES**

By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and upon the request of the Armenian Relief Society Regional Executive, each year a special requiem service is offered in all Prelacy Churches for departed members of the Armenian Relief Society.

This year's requiem service will be offered on Sunday, February 27<sup>th</sup>, in all churches following Divine Liturgy.

We urge our faithful parishioners to attend this solemn service and pay tribute to the memory of the devoted servants of the Armenian Relief Society.

\*\*\*

## **ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՅ ՆՈՐ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻՆ**

Կազմակերպութեամբ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, Ուրբաթ, 25 Փետրուարի երեկոյեան, ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ «Խաչատուրեան» Հայ Կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ, ի պատիւ Արժ. Տ. Խորէն Ա. Քհնյ. Հապէշեանի, որ Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով եւ Խառն Ժողովի որոշումով, հոգեւոր հովիւ նշանակուեցաւ Սան Ֆրանսիսքոյի շրջանէն ներս:

## **WELCOMING RECEPTION FOR NEW PASTOR OF ST. GREGORY CHURCH OF SAN FRANCISCO**

The Board of Trustees of St. Gregory Church of San Francisco has organized a welcoming reception for Archpriest Fr. Khoren Habeshian, who the Prelate and Religious and Executive Councils recently appointed to serve as pastor of the church.

The reception will be held on the evening of Friday, February 25<sup>th</sup> at the Saroyan Hall of the Khachaturian Armenian Center.

\*\*\*

## **ՔԱՆԱՏԱՅԻ ԹԵՄԸ ՀԻՐԸՆԿԱԼԵՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ**

Ս. Ղեւնդեանց Տօնին առիթով, Միացեալ Նահանգներու Արեւելեան, Արեւմտեան եւ Զանաւտայի Թեմերու Հոգեւորականաց աւանդական Համագումարը տեղի ունեցաւ 21էն 24 Փետրուարին, Թորոնթօ քաղաքին մէջ:



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանն ու հոգեւորականաց դասու անդամները շաբաթասկիզբին մեկնած էին Քանատա, մասնակցելու համար համագումարին:

Հետեւեալ տեղեկութիւնները ստացած ենք համագումարէն.-

Երեսուն հինգ տարուան գեղեցիկ

աւանդութիւն մըն է որ կը շարունակուի, երբ այս տարի եւս, Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան ու Քանատայի Թեմերուն մէջ ծառայող շուրջ 40 հոգեւորականներ Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից տօնին առիթով հաւաքուեցան Թորոնթոյի Ս. Աստուածածին Յայր. Առաք. Եկեղեցւոյ յարկին տակ, երեքօրեայ յայտագրով մը՝ քննարկելու համար մեր թեմերը յուզող ազգային-կրօնական եւ եկեղեցական մտահոգութիւնները՝ նախագահութեամբ երեք թեմակալ Առաջնորդ Սրբազաններուն՝ Բարձր. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի (Քանատայի հիւրընկալ Թեմ), Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի (Ա. Մ. Նահանգներու Արեւելեան Թեմ), եւ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի (Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմ):

Ժողովին բացումը կատարուեցաւ 21 Փետրուարին, առաւօտեան ժամը 10:30-ին, հաւաքական աղօթքով:



Հիւրընկալ Յովիւին՝ Գերայ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի բարի գալուստի խօսքէն ետք, ողջոյնի եւ օրհնութեան խօսքերով ելոյթ ունեցան Արեւելեան եւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Սրբազան Յայրերը:

Կարդացուեցաւ Մեծի Տան Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամը, ուր Վեհափառ Յայրապետը կ'ողջունէր երեք թեմերու

հոգեւորականաց դասերը՝ յորդորելով զանոնք, որ ամուր կառչին իրենց հաւատքին ու առաքելութեան, եւ Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդին ծառայելը դարձնեն իրենց գլխաւոր նպատակը:

Ժողովը իր աշխատանքներուն սկսաւ դիւանի ընտրութեամբ. ատենապետ ընտրուեցաւ Գերշ. Տ. Անուշաւան Եպս. Դանիելեան, իսկ ատենադպիրներ՝ Տեր Զրայր Ա. Քիւյ. Նիկոլեան եւ Տեր Արտակ Քիւյ. Տէմիրճեան:

Կարդացուեցաւ նաեւ Վեհափառ Զայրապետի հռչակագիր-պատգամը, ըստ որուն, 2011 տարին կը ձօնուէր Զայ Մանուկին:

Երեքօրեայ համագումարի ընթացքին, առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւններու աւարտին, հոգեւոր հայրերն ու ներկայ հաւատացեալները ունկնդրեցին օրուան խորհրդածութիւնները, որոնք նիւթ ունէին Զայ Մանուկն ու ընդհանրապէս անոր առնչուած մտահոգութիւնները: Եղան նաեւ դասախօսութիւններ:

Պաշտօնական հաղորդագրութիւնը հետագային)

## **GHEVONTIANTZ JOINT CLERGY CONFERENCE OF THE NORTH AMERICAN PRELACIES CONCLUDES**



On Monday, February 21<sup>st</sup>, 2011, the biennial joint Ghevontiantz clergy conference convened at St. Mary's Church in Toronto, Canada, hosted by the Prelacy of Canada and presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, H.E. Archbishop Oshagan Choloyan (Prelate of the Eastern U.S.), and H.E. Archbishop Khajag Hagopian (Prelate of Canada).

The Prelate and clergy order of our Prelacy departed for Canada on Sunday, February 20<sup>th</sup>, and returned on Friday, February 25<sup>th</sup>.

Nearly forty clergy members from the three North American Prelacies gathered for the conference, which focused on the "Year of the Armenian Child" proclaimed by H.H. Catholicos Aram I.

The conference kicked off with morning prayers on Monday, February 21<sup>st</sup>. Welcoming remarks were delivered by Pastor of St. Mary's Church Very Rev. Fr. Meghriq Parikian, followed by remarks by Archbishop Choloyan and Archbishop Mardirossian.

The letter of blessing and encouragement by H.H. Catholicos Aram I addressed to the three Prelates and the clergy order was then read.

Following the service, the conference convened with the election of the tivan, and the reading of the Pontifical Message of H.H. proclaiming 2011 the "Year of the Armenian Child".

The conference featured morning and evening prayer services, lectures, spiritual reflections, and also special events and services for the community to participate in, which were held at St. Mary's Church in Toronto.

(Official press release to follow).

\*\*\*

## ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐԴՆԷՔ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ



Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 19 Փետրուար 2011ը տօնն էր Ս. Սարգիս Զօրավարին, իր Մարտիրոս որդւոյն եւ տասնչորս զինուորներուն, որոնք իրենց հաւատքի վկայութիւնը տուին եւ նահատակուեցան յանուն Տէր Յիսուս Զրիստոսի եւ քրիստոնէական անբասիր

հաւատքին:

Այս տօնը ըլլալով նաեւ անուանակոչութեան տօնը Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ, Կիրակի, 20 Փետրուարին, հանդիսաւոր սուրբ եւ անմահ պատարագ մատուցուեցաւ: Ս. Պատարագը մատուցեց եւ իր հոգեւոր պատգամը փոխանցեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ս. Սեղանին սպասարկեցին Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկմեան եւ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեան: Ներկայ էին Եկեղեցւոյ գլխաւոր բարերարներ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Սիւզան Կիտցիսեան, հարազատներ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Իր պատգամով, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ՝ հոգեպարար օրուան համախմբումին համար, բոլորին մաղթելով, որ Սուրբ Հոգին շինութիւն բերէ Ս. Սարգիս Եկեղեցւոյ համայնքի հոգիներուն ու կեանքերուն: Ան ողջունեց ներկայութիւնը Եկեղեցւոյ գլխաւոր բարերարներուն, հովանաւորներուն, հոգաբարձութեան, երեսփոխաններուն, տիկնանց միութեան եւ յարակից մարմիններուն:

Ապա, Սրբազան Հայրը վեր առաւ Ս. Սարգիս Զօրավարի աննկուն հաւատքը, Տէր Յիսուս Զրիստոսի եւ քրիստոնէական ճշմարտութեան ի խնդիր անոր ընծայաբերումը եւ նուիրաբերումը: Ս. Սարգիս Զօրավար արհամարիեց աշխարհի փառքը, ոչինչ համարեց երկրաւոր թագաւորներու իրեն խոստացած պատիւները, նախապատիւ ու անանց հարստութիւն համարելով Տէր Յիսուս Զրիստոսի կողմէ ստանալիք յաւիտենական փառքն ու պսակը: Ան դարձաւ վկայ Զրիստոսի եւ իր հաւատքի կրակով վարակեց

իր Մարտիրոս որդին եւ տասնչորս զինուորները, որոնք նահատակութեամբ վկայեցին իրենց հաւատքը: «Այս եկեղեցւոյ պաշտպան Սուրբը՝ Ս. Սարգիս Չօրավար, իր բարեխօսութեամբը փոխադարձ սէր եւ նորոգութիւն թող բերէ մեր ժողովուրդի հոգիներուն մէջ» մաղթանքով աւարտեց իր պատգամը Սրբազան Յայրը:

Ս. Պատարագի աւարտին, կատարուեցաւ մատաղի օրհնութիւն եւ յատուկ հոգեհանգիստ՝ եկեղեցւոյ նախկին հոգեւոր հովիւ՝ հոգելոյս Տ. Սարգիս Զինյ. Անդրեասեանի, եկեղեցւոյ գլխաւոր բարերարներու ծնողաց, Սիսի Յայրենակցական Միութեան հին եւ նոր ննջեցեալներու եւ հայ ժողովուրդի զաւակներուն ննջեցելոց հոգւոյն ի հանգիստ: Աւարտին, բոլոր ներկաները միասին երգեցին «Կիլիկիա»ն եւ ապա «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ, եկեղեցական թափօրը պատարագիչ Սրբազանը հասցուց մինչեւ աւանդատուն:

Արարողութիւններէն ետք, «Անտոն Անտոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ տիկնանց միութեան կողմէ պատրաստուած սիրոյ սեղանը, որուն ընթացքին Սրբազան Յայրը իր գնահատականն ու քաջալերական խօսքը փոխանցեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, հոգաբարձութեան եւ տիկնանց միութեան անդամներուն, բարերարներուն, հովանաւորներուն եւ ներկաներուն: Խօսք առին նաեւ հոգաբարձութեան ատենապետը՝ Տիար Սարգիս Թաթիկեան եւ բարերարը՝ Տիար Սարգիս Կիտցինեան:

## NAME DAY CELEBRATION OF ST. SARKIS CHURCH OF PASADENA



On Saturday, February 19<sup>th</sup>, 2011, the Armenian Church celebrated the Feast of St. Sarkis and his son Mardiros. This Feast is also the name day of St. Sarkis Church in Pasadena.

On this occasion, on Sunday, February 20<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Sarkis Church where he also delivered the sermon and conducted the blessing of "madagh". Very Rev. Fr.

Barthev Gulumian and Parish Pastor Rev. Fr. Khoren Babochian assisted at the altar. Among the faithful in attendance were church benefactors Mr. and Mrs. Sarkis and Suzan Kitsinian.

Prior to his sermon, the prelate gave thanks to God for granting the day for the community to come together to celebrate the name day of the church.

In his sermon, the Prelate exalted the unwavering faith of St. Sarkis and his unfaltering faith and service to our Lord Jesus Christ and to his Christian beliefs. He spoke of how St. Sarkis denounced worldly riches and instead looked to the heavenly blessings he would receive from our Lord Savior, how he rallied his son Mardiros and his fourteen soldiers, all of whom became martyrs for their faith. "Through the intercession of St. Sarkis, protector of this church, may love and renewal fill the hearts and souls of our people", concluded the Prelate.

At the conclusion of Divine Liturgy the Prelate conducted the blessing of madagh and presided over requiem service for the previous pastor Rev. Fr. Sarkis Antreassian, the parents of the church benefactors, and departed members of the Sis Compatriotic Union.

The service concluded with the singing of the Cilician anthem. With the singing of the "Oorakh Ler" hymn, the Prelate was led in a procession to the entrance of the church.

A luncheon followed at the "Andon Andonian" Hall organized by the Pastor and Board of Trustees and hosted by the parish Ladies Auxiliary. During the luncheon, the Prelate commended and conveyed his blessings to the Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary for their devoted service, and to the benefactors and sponsors for their continued support. Board of Trustees Chair Mr. Sarkis Tatuigian and benefactor Mr. Sarkis Kitsinian also delivered remarks.

\*\*\*